

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ



Փետրվարի 25-ին մանկավարժության և սպորտի ֆակուլտետում ՈՒԳԸ նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական-գեղարվեստական միջոցառում՝ նվիրված Պարույր Սևակի ծննդյան 95-ամյակին:

Մանկավարժության բաժնի տարբեր կուրսերի ուսանողներ ներկայացրել են Պ. Սևակի կենսագրական, գրական-ստեղծագործական ուղին, նրա կենսագրությունից առանձնացրել հետաքրքիր հատվածներ, ապա ասմունքել բանաստեղծություններ, որոնք ուղեկցվել են ազգային նվագարանների նվագակցությամբ:

Ուսանողների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը ողջունել և գնահատել են ֆակուլտետի ղեկան Շահեն Այդինյանը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչն ու դասախոսները, ովքեր ևս հատվածներ են արտասանել Սևակի պոեզիայից:

«Ուրախ եմ, որ սևակյան բան ու բառով հիշեցրեցիք այն արժեքները, որոնք կան և պիտի լինեն: Սևակը այս սերնդի համար ևս շարունակում է ուղեմիշ և չափանիշ լինել», - ասել է Շ. Այդինյանը:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Էլլադա Բաղդասարյանը սևակյան պատգամով խոսք հղեց ուսանողներին՝ հորդորելով «մարդ լինել» ամենից առաջ:

Միջոցառման ավարտին մասնակիցները ֆակուլտետի ղեկանի կողմից ստացել են խորհրդանշական նվերներ՝ գրքեր:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԱՆԿՃԱՐ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՐՆԹԱՅՆԵՐ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սիրելի՛ դիմորդներ,

Արցախի պետական համալսարանի կերպարվեստի ամբիոնը 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության համար կազմակերպում է անվճար նախապատրաստական դասընթացներ:

Դասընթացներին մասնակցելու համար կարող եք դիմել ԱրՊՀ կերպարվեստի ամբիոն:



	«Քո ժամանակը»	
	ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՏԱԹԵՐԹ	
	Սեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ.՝ (047) 94 04 91	Տպաքանակ՝ 400 Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում



ՔՈ ԺԱՄԱՆԱԿԸ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՏԱԹԵՐԹ

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄՈՒՅՈՒՄ ԵՆ ԱՆՅԵԼ ԱՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի քաղաքագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները փետրվարի 4-ից փորձուսուցում են անցել Արցախի արտաքին գործերի նախարարությունում:

Երկու շաբաթ տևած փորձուսուցումը փետրվարի 15-ին հասավ իր տրամաբանական ավարտին: Ուսանողները հանդիպումներ են ունեցել արտգործնախարար Մասիս Մայիլյանի, փոխարտգործնախարարներ Գրիգորյանի և Կարամյանի հետ:

րարներ Ֆելիքս Խաչատրյանի և Արմինե Ալեքսանյանի, վարչությունների ղեկավարների և աշխատակիցների հետ:

«Բացահայտումների, նոր ծանոթությունների ժամանակաշրջան էր մեզ համար: Փորձուսուցումը մեզ՝ ուսանողներին համար նոր աշխարհի բացահայտում դարձավ: Ծանոթացանք կատարվող աշխատանքներին, արտգործնախարարության ծավալած գործունեությանը, աշխատանքում հանդիպող դժվարություններին: Հասկացանք, թե որտեղ և որ բնագավառում կարող ենք օգտագործել մեր ներուժը՝ նպաստելու մեր երկրի շենագմանն ու զարգացմանը», - ասում են ուսանողները և գոհունակություն հայտնում փորձուսուցման ընթացքից, արտգործնախարարության աշխատակիցներից, որոնք նպաստել են իրենց՝ նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու համար:

Հավելենք, որ ուսանողների փորձուսուցումը շարունակվել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովում:

Արմինե ՊԵՏՐՈՍՅԱՆ, քաղաքագիտ. 3-րդ կուրս

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇՈՒՇԻԻ «ՇՈՂ» ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ հոգեբանական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում այցելել են Շուշիի «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոն:

Կենտրոնի գոյությունը ստեղծում է դրական մշակութային և կրթական միջավայր: Հիմնական շահառուները դպրոցահասակ երեխաներն են՝ սոցիալապես անապահով ընտանիքներից, որոնք ունեն կրթական խնդիրներ: Կենտրոնում փորձառու մանկավարժների, սոցիալական աշխատողների և հոգեբանների միջոցով նրանց մատուցվում են կրթական, սոցիալական, հոգեբանական եւ ժամանցային ծառայություններ:

Դպրոցից հետո երեխաները հաճախում են կենտրոն, որտեղ ճաշում են և մասնակցում տարբեր դասընթացների:

Ուսանողները երեխաների հետ ծանոթանալուց հետո անմիջապես խմբեր կազմեցին և սկսեցին աշխատել:



խատել: Նկարչությամբ զբաղվեցին, գրուցեցին, ապա բալուն խաղացին: Հանդիպման վերջում երեխաները վայելեցին կենտրոնի սանի դաշնամուրային կատարումը: Ուսանողների այցերը շարունակական բնույթ կկրեն և կօգնեն երեխաներին հավատալ իրենց ուժերին, հաջողությամբ դիմագրավել կյանքի դժվարին իրավիճակները և դառնալ հանրօգուտ բարիք ստեղծող քաղաքացիներ:

ՍԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, լրագր. 3-րդ կուրս

ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Փետրվարի 13-ը պատմական օր է ոչ միայն արցախցիների, այլև ողջ հայության համար: 1988թ. այդ օրը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանողությունը (ներկայիս Արցախի պետական համալսարանի) դուրս եկավ հրապարակային ցույցի՝ բարձրաձայն արտահայտելու Լեռնային Ղարաբաղը Մայր Հայաստանին վերամիավորելու իր անկողորմ մտադրության մասին: Փետրվարը հայ ժողովրդի պատմության մեջ ամրագրվեց որպես Արցախյան շարժման սկիզբ:

ցախն էլ ունի ապրելու իրավունք: 1980-ական թվականներին վերընծյուղված Արցախյան ազգային-ազատագրական շարժումը շատ բան փոխեց հայության կյանքում: Արցախյան շարժումն առաջին հերթին պայքար էր մարդու իրավունքների, Աստծո կողմից նրան տրված ազատ ապրելու իրավունքի վերահաստատման համար:



գել... «Էս սարն իմն է, էս ծառն իմն է» ասելով՝ նա սահմաններ չի ծանաչել իրավունքի հարցում: Պաշտպանելով իր իրավունքները՝ 1988-ի փետրվարին հայ ժողովուրդը ոտքի կանգնեց, պայքարեց հայրենիքի անկախության համար՝ միաձայն վանկարկելով «մի-ա-ցում»:

Մենք կայացած պետության սերունդ ենք, ծնվել ենք անկախ Արցախում: Մենք պարտավոր ենք սիրել մեր ծննդավայրը, նրա յուրաքանչյուր թիզ հողը:

Հավատում եմ, որ մենք կհասնենք մեր վերջնամպատակին և իրականացած կտեսնենք մեր համազգային երազանքը:

Հերմինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայ գրակ., մազ. 2-րդ կուրս

Երկիրս փոքր է: Աշխարհի գլոբուսի վրա չենք գտնի իմ գողտրիկ Արցախը, բայց հզոր է հայրենիքս, որովհետև արժանապատվորեն պահպանում է իր անկախությունը, որը ձեռք է բերվել մեր զինվորների արյան գնով: Մենք աշխարհին ցույց տվեցինք, թե ինչ է նշանակում ազգի միասնություն: Վառ ապացույցը՝ Արցախյան գոյամարտը, նրա հաղթանակը:

Աստված մարդուն ստեղծել է՝ նրան տալով առաջին հերթին ապրելու իրավունք: Հայի կերպարի կողքին դնել թուրքի՝ մեր դարավոր թշնամու կերպարը: Մի՞թե նրան էլ է նույն Աստվածը տվել ապրելու, արարելու իրավունքը... Ինչու՞ է Աստված հանդուրժել, որ նա դուրս գա իրեն տրված իրավունքի սահմաններից, ինչու՞ չի հատել նրա ձեռքը, երբ թալանել է, սպանել, հոշոտել, առևան-

ԱՐԴՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆՇԵԼ ԵՆ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ



Փետրվարի 13-ին ԱրԴՅ-ում նշվեց Տյառնընդա-

ռաջի տոնը: Արարողությանը մասնակցել են նաև ԱրԴՅ ռեկտոր Արմեն Սարգսյանը, գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը, համալսարանի ղեկավարությունը, ուսանողությունը:

Ուսանողները տոնի առթիվ համալսարանի բակում տաղավար են պատրաստել, կազմակերպել հյուրասիրություն ազգային ուտեստներով՝ գաթա, աղանձ: Վերջինս Տրնդեզի սեղանի առատության և հարստության նշանն է:

Ազգագրական կատարումների ներքո ուսանողները վառել են խարույկը, որը մաքրագործող և սրբագործող նշանակություն ունի, հանդես եկել ազգագրական պարերով:

ԿՐԹՕՋԱԽԻ ԵՌՈՒՋԵՌԸ՝ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԴԱՐՉՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ



Բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Լորեստա Արզումանյանը ներբուհական ակտիվ եռուզեռում իր տեղն ու դիրքն ունենալուց բացի, բ ա զ մ ա շ ն ո թ ի դրսևորում ունի նաև արտահամալսարանական կյանքում: Հետաքրքիր գրույցը նրա հետ բացահայտեց այսօրվա ուսանողի և մի ուրույն կերպար:

-Լորեստա, քո կարծիքով ի՞նչ է տալիս բուհն ուսանողներին՝ ուսում, կրթություն, կարիերայի ամրակցում, անկաշկանդ, ինքնադրսևորվելու մթնոլորտ, շփում, փորձի փոխանակում...

-Նախ նշեմ, որ ընտրելով այս կամ այն մասնագիտությունը, ուսանողն արդեն պատասխանատու և խոհեմ քայլ է կատարում դեպի մեծ կյանք: Իսկ այդ հետաքրքիր շրջանն իր հերթին նրան տալիս է լայն հնարավորություններ մասնագիտանալու, փորձ ձեռք բերելու, ուսման հանեպ իր սերն ու նվիրվածությունն արտահայտելու: Ինձ համար բուհը ոչ միայն կրթօջախ է, այլև ցանկությունները նպատակներ դարձնելու արդյունավետ նախապայման:

-Արդեն երեք տարի է մայր բուհի ուսանող ես: Ինչո՞ւ անանձնացավ ներբուհական կյանքի քո եռամյա ակտիվ կենսագործունեությունը:

- Ասում եմ՝ մարդը ծերանում է այն ժամանակ, երբ նրանում մահանում է ուսանողը: Անկախ բուհում ուսանելու տարիներից, յուրաքանչյուր ուսանողի կյանքում կարմիր թելի պես ուրվագծվում են ուսանողական տարիները: Այս երեք տարում ես ինձ լիարժեք ուսանող էի զգում ոչ միայն կրթագիտական հարթակում, այլև կազմակերպվող տարաբնույթ նախաձեռնություններում: Տպավորված էի ֆլեշմոբով, որը կազմակերպվեց եռատոնի առթիվ՝ բուհի համապատասխան բաժնի և ուսանողների մասնակցությամբ: Ես ևս մի մասնիկն էի այդ տոնական միջոցառման: Շատ տպավորիչ են նաև հաճախակի կազմակերպվող ինտելեկտուալ խաղերը, որոնք ոչ միայն քննում են ուսանողի ինտելեկտուալ կարողությունները, այլև զգոնություն ու համարձակություն ներշնչում մրցակից լինելու պարագայում: Այդ խաղերը ևս համալրեցին իմ գիտական պաշարը և՛ մասնագիտական, և՛ այլ մասնագիտությունների շրջանակներում: Ուսումնառության ընթացքում հանդես եմ եկել նաև հասարակական ակտիվությամբ, համակուրսեցիներիս հետ այցելել ենք գիշերօթիկ դպրոցներ, մանկատներ՝ դրանով ավելի մոտենալով մանկավարժի նուրբ ու պատասխանատու առաքելությանը:

-Խոսեցինք մարդկային արժեքներից ու բարեգործական վեհ առաքելությունից: Գիտեմ, որ մասնակցել եք մի շարք միջոցառումների, որոնք կազմակերպվել էին բարեգործական նկատառումներով:

-Այո, վերջերս Ստեփանակերտի երիտասարդության պալատում կայացավ բարեգործական համերգ, որին ընդգրկված էին մի շարք մշակութային ու պարային խմբեր: Միջոցառումից ստացված հասույթը տրամադրվեց քառօրյա պատերազմում զոհված տղաների ընտանիքներին: Որպես արցախցի ուսանող՝ ես ևս ընդգրկված էի արցախյան մոդելների թիմում, ներկայացնում էի «Արցախյան տարազ ժամանակակից հագուկապ» խորագիրը կրող հանդերձները:

- Քաղաքացիական անհանգստություններն ու ժամանակի շունչը, հասարակական իրավիճակը, համամարդկային ցիդը որքանո՞վ է արտացոլվում բուհում ընթացող տեսական, գործնական դասընթացներում:

- Բուհում, բացի տեսական գիտելիքներ ստանալուց, կազմակերպվում են նաև գործնական հետաքրքիր միջոցառումներ: Դա նպաստում է տեսական գիտելիքների վրա պրակտիկ դաշտում վարպետանալուն: Կցանկանայի առանձնացնել «Մեր ժամանակի հերոսը» գրքի վերլուծության ընթացքում կազմակերպված խաղ-դատավարությունը՝ ուսանողների մասնակցությամբ: Ամբողջ դատավարության ընթացքում ուսանողների հագուկապը, բեմախաղը, օբյեկտիվ դիրքորոշումը հանդիսատեսին տեղափոխեց հենց այդ ժամանակները՝ մասնակիցը դարձնելով անաչառ դատավարության: Հենց այստեղ է, որ ամբողջությամբ տեսանելի էր ժամանակի շունչը, քաղաքացիական անհանգստությունն ու ուսանողի ծայրը:

-Ուսանող լինելուց բացի, գիտեմ, որ տարաբնույթ նախասիրություններ ունես: Պատմիր այդ մասին:

- Իմ նախասիրությունը ինձ համար կենսակերպ է: Եթե արվեստն ու նրա գույները մարդու հոգու «բնության» մեջ են, ապա դրանք չեն կարող մնալ աննկատ: Դրանք ինչ-որ մի ուղի կգտնեն դրսևորվելու համար: Ունեն մեծաքանակ ձեռքի աշխատանքներ, գործում եմ փափուկ խաղալիքներ, պատրաստում տարոսիկներ, բազմաթիվ հայկական տարազ խորհրդանշող զարդանախշեր ու գործում գործվածքներ: Քո վառ մտապատկերացումներին ծնունդ տալու համար այդ գործերը ևս պետք է ներարկված լինեն հայկական ոգով, սիրով ու հայրենասիրությամբ:

-Ո՞րն է կյանքում քո ստանձնած դերը: Քո կարգախոսը:

- Կրթությունը ամենահզոր զենքն է, որը կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: Բայց այդքանով հանդերձ, կարծում եմ, որ մասնագետ դառնալուց զատ, կյանքի յուրաքանչյուր փուլում պետք է մարդ մնալ և չմոռանալ մարդկային արժեքների մասին:

-Եվ այնուամենայնիվ, ո՞րն է կյանքում քո հաղթանակի գրավականը:

- Ուսում, աշխատասիրություն, և մարդկային արժեքներ: Ահա յուրաքանչյուրիս հաղթանակի գրավականը:

Հարցազրույցը՝ Անահիտ ՀԱՎՈՐՅԱՆԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ը ՀՈՒՒՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆՂՅԱՆ ՕՐՆ Է. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԴԱՐՁԱՎ 150 ՏԱՐԵԿԱՆ

ԱրՊՀ-ում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված գիրք նվիրելու տոնին և մեծ բանաստեղծի հոբելյանին:

Քանի՜ ձեռքից են վառվել,
Վառվել ու հուր են դառել,
Հուր են դառել՝ լույս տրվել,
Լույս տալով են ըսպառվել:



ՆՊԱՏԱԿԸ՝ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԸՆԹԵՐՑԱՍԵՐ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻՆ



Փետրվարի 18-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետում կազմակերպվել է «Գուշակի՛ր գրողին» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում էին բանասիրական ֆակուլտետի տարբեր մասնագիտության ուսանողներ:

Միջոցառման նախաձեռնողները հայոց լեզու և

գրականության մասնագիտությամբ սովորող ուսանողներ Սոնա Մուսայելյանն ու Յերմինե Արզումանյանն են:

«Խաղի նպատակն էր բացահայտել ընթերցասեր բանասերներին: Մրցույթի կազմակերպման գաղափարը մեր չէ, պարզապես առիթ էինք փնտրում՝ այն կյանքի կոչելու: Կարծիք կա, որ այսօր երիտասարդությունը հեռացել է գրքից, ինչը անթույլատրելի են համարում բանասիրական ֆակուլտետում սովորողների պարագայում: Այս միջոցառումը ընթերցանությունը խթանելու նպատակ էր հետապնդում մեզ», - ասել է Սոնա Մուսայելյանը՝ նշելով, որ ինտելեկտուալ խաղը կազմակերպվել են Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի և մայրենիի օրվա առթիվ: Հաղթող թիմը պարգևատրվել է պատվոգրով, իսկ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցնողները՝ գրքերով:

ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ՝ ՀՈՒՒՎԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի ուսանողները կազմակերպել են ինտելեկտուալ խաղ-մրցույթ, որին մասնակցում էին բնագիտական ֆակուլտետի տարբեր մասնագիտության ուսանողներ:

«Ինտելեկտուալ խաղը կազմակերպել ենք Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ: Նպատակն էր ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր, ստուգել մեր ուսանողների իմացության աստիճանը՝ հայ նշանավոր գրողի՝ Ամենայն հայոց բանաստեղծի կյանքի, գործունեության և ստեղծագործության վերաբերյալ», - նշել է ուսանողուհի Անի Ավանեսյանը: Խաղում ընդգրկված բոլոր հարցերը վերաբերում էին Հովհաննես Թումանյանի գրական-հասարակական և հայամ-



պաստ գործունեությանը, կյանքի հետաքրքիր դրվագներին, ստեղծագործություններին: Հաղթող թիմերը պարգևատրվել են պատվոգրերով:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ. ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԽՈՆԱՐՀՎՈՒՄ

Երևի թե չկա մի հայ, ով Հրանտ Դինքի անունը լսելիս կորստյան ցավի և միաժամանակ հպարտության զգացում չունենա: Թուրքիայում հայերեն և թուրքերեն հրատարակվող «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը պայքարող հայի տեսակ էր, ով իր ծայրնով պատմական ճշմարտությունը լսելի էր դարձնում ոչ միայն թուրք ժողովրդին, այլ՝ ամբողջ աշխարհին: 2007 թվականի հունվարի 19-ին ամենադաժան ձևով ընդհատեցին այդ ծայրը:



Դինքը համարձակ ու անվախ մի մտավորական էր, լրագրող, ով հայտնի է իր համարձակ ելույթներով ու հողվածներով: Նա այն համոզմունքին էր, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե պատերազմական ժամանակների հետևանք էր, ինչպես հաստատում էր Թուրքիայի պաշտոնական տեսակետը, այլև կանխատեսված ու ծրագրավորված կոտորած: Նա ամեն կերպ փորձում էր լույս սփռել աղավաղվող պատմության վրա, բացել թուրք ժողովրդի աչքերը, ցանկանում էր, որ նրանք կարողանան դեմ առ դեմ կանգնել պատմական ճշմարտության առաջ: Հրանտ Դինքը Թուրքիայում հայոց ճշմարտության ծայրը բարձրացնողն էր: Նա մշտապես ընդգծում էր, որ թուրք ժողովուրդը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը՝ շեշտելով, որ դա հնարավոր կլինի, երբ Թուրքիան դառնա ժողովրդավար երկիր: Բայց դա չի նշանակում, որ թուրք ժողովրդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը հային մոռացության կտա ցեղասպանության ենթարկված իր պապերին, իր սարսափելի անցյալն ու այդ սարսափելի անցյալի հեղինակներին:

Հրանտ Դինքը շեշտում էր այն հանգամանքը, որ ցեղասպանությունը պետք է ճանաչելի դարձնել ոչ թե Թուրքիայի կառավարությանը, այլ՝ թուրք ժողովրդին, քանի որ դա կնպաստի հետագայում ցեղասպանության՝ պետական մակարդակով ճանաչմանը: Նա իր ամբողջ կյանքի ընթացքում սպառնալիքներ էր ստանում Թուրքիայում գործող ազգայնական խմբավորումներից, բայց, միևնույն է, մնում էր հանգիստ: «Հրանտ Դինքը թուրքաոտյաց չէր երբեք, նա հայասեր էլ չէր, այլ հայ էր պարզապես», - այսպես են բնութագրում Դինքին մտերիները: Նա պարզապես մեծ մարդասեր էր, դա գնահատում էին անգամ թուրքերը: Եվ հենց այդ մարդասիրության, ճշմարտասիրության պատճառով էլ այսօր Հրանտ Դինքը չկա: 2007 թվականի հունվարի 19-ին Ստամբուլում՝ «Ակոս» թերթի խմբագրության շենքի դիմաց, թուրք երիտասարդի արձակած կրակոցից սպանվեց Հրանտ Դինքը:

Արև ԲԱԲԱՅԱՆ, լրագրություն, 4-րդ կուրս

ՍՈՒՄԳԱՅԻԹ՝ ՉՍՊԻԱՑՈՂ ՎԵՐՔ

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը Սումգայիթի հայկական ջարդերի զոհերի հիշատակին նվիրված բաց դաս է կազմակերպել:


«Պատմական իրադարձությունները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, սկիզբ առնելով 19-րդ դարի 90-ական թթ., կրկնվել է 1915թ., այնուհետև Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում: Ոճրագործությունը հանդիսանում էր թուրքական իշխանությունների գերնպատակը: 1988թ., նախքան Արցախյան ազատագրական պայքարի ծավալումը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդում ընդունվում է մոր քաղաքական կուրս՝ բարենորոգումների քաղաքականությունը, որի արդյունքում ծավալվում է ազգային-ազատագրական պայքար, ինչն էլ խելդելու համար իրականաց-

վում է սումգայիթյան ողբերգությունը», - ասել է Նունե Սարումյանը:

Անդրադառնալով Սումգայիթի ցեղասպանության փաստի քողարկմանը և միջազգային հանրության ապատեղեկացմանը՝ ուսանողուհի Երիկա Աբրահամյանն ընդգծել է. «Այն փաստը, որ Արբեջանն իր պատասխանատվությունն ու մեղքը կատարված հանցագործությունները ընդունելու փոխարեն շարունակում է հակահայկական գործունեությունը, վկայում է, որ Բաքուն առ այսօր շարունակում է վտանգ ներկայացնել ոչ միայն իր իսկ բնակչության, այլև ողջ տարածաշրջանի համար», - ասել է նա՝ նշելով, որ դրա հիմնական պատճառն այն է, որ Բաքվի հրեշավոր գործողությանը առայժմ ոչ քաղաքական, ոչ իրավական, ոչ բարոյական գնահատական չի տրվել, ավելին, այդ ամենը կատարվել է միջազգային հանրության աչքի առաջ:

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՊԱՅԾԱՌ Է՝ ՈՐՊԵՍ ՄՇՏԱԲՈՐԲՈՔ ՓԱՐՈՍ

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ԱրՊԳ հայոց լեզվի ամբիոնը հայտարարել էր «Լավագույն ստեղծագործող» մրցույթը: Մրցույթում Գերմինե Արզումանյանը զբաղեցրել է 1-ին տեղը: Ներկայացնում ենք նրա աշխատանքը:



Երգեցիկ է հայերենը: Ամեն հայի շուրթերից այն հնչում է որպես սքանչելի մեղեդի, հնչում է միշտ յուրովի, բայց և կենդանի ու քաղցրալուր: Այս հոգեթով մեղեդին հազարամյակների խորքից է գալիս: Նենգ թշնամիները փորձել են խաթարել նրա հերոսական երթը, սակայն ապարդյուն: Մարտի դաշտում նա հզոր ռազմակոչի է վերածվել և մղել հայ քաջերին դեպի հաղթանակներ:

ազգերի ներկայացուցիչներին էլ անտարբեր չի թողել: Նրանց բույրը գրավել է շատերին, ովքեր ցանկացել են սուզվել այդ բուրաստանի մեջ և զգալ բոլոր ծաղիկները հատիկ առ հատիկ:

Լեզուն եղել է հայ ժողովրդի գոյապահպանության հիմքը, և արնախում ոսոխներով շրջապատված մեր ազգը չէր կարող միայն սրով պաշտպանել այդ հարստությունը: Եվ ահա Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, որով լեզուն դարձավ հայերի անկողոպտելի գանձը: Հայերեն թարգմանվեց Սուրբ գիրքը, և ծուլվեցին ազգային ինքնության երկու հզոր հենարանները՝ դառնալով անպարտելի զենք ընդդեմ ուժացման:


Այդ աննման ծաղկաստանը մեկ անգամ մտնողն այլևս երբեք չի ցանկանա դուրս գալ այնտեղից: Սակայն ինչպե՞ս գտնել այն դուռը, որը կբացի մեր առջև մի բուրուճնալի ու երանավետ աշխարհ...

Երբ առաջին անգամ մայր արտասանեցին մեր շուրթերը, հեռվում մշմարվեցին ծաղկաստաններ: Երբ առաջին անգամ փոքրիկ մատներով թղթի վրա գծագրեցինք Ա տառը սկսեցինք քայլել այն ճանապարհով, որ պետք է հասցնեք մեզ մեր երազած վայրը: Այդ ճանապարհով քայլելիս հասնում ենք մի տեղ, որտեղից ճանապարհը երկու մասի է բաժանվում: Եթե ընտրենք այն ճանապարհը, որն անցնում է գրքերի անժայրածիր աշխարհով, ապա շուտով կհայտնվենք այն վայրում, որին տենչում ենք ամբողջ հոգով: Մինչդեռ գրքերից հեռանալու դեպքում մեզ կսպասի մի անշուք պարտեզ, որտեղ կլինեն այնքան ծաղիկներ, որքան պետք են բավարարելու մեր սահմանափակ երևակայությունը:

Երբ առաջին անգամ մայր արտասանեցին մեր շուրթերը, հեռվում մշմարվեցին ծաղկաստաններ: Երբ առաջին անգամ փոքրիկ մատներով թղթի վրա գծագրեցինք Ա տառը սկսեցինք քայլել այն ճանապարհով, որ պետք է հասցնեք մեզ մեր երազած վայրը: Այդ ճանապարհով քայլելիս հասնում ենք մի տեղ, որտեղից ճանապարհը երկու մասի է բաժանվում: Եթե ընտրենք այն ճանապարհը, որն անցնում է գրքերի անժայրածիր աշխարհով, ապա շուտով կհայտնվենք այն վայրում, որին տենչում ենք ամբողջ հոգով: Մինչդեռ գրքերից հեռանալու դեպքում մեզ կսպասի մի անշուք պարտեզ, որտեղ կլինեն այնքան ծաղիկներ, որքան պետք են բավարարելու մեր սահմանափակ երևակայությունը:

Գերմինե ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԺԱՄԱՆՅՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ



Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՈՒԳԸ և ՈՒՄ համատեղ նախաձեռնությամբ ուսանողական առօրյան հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու, ինչպես նաև արդյունավետ ժամանց

ապահովելու նպատակով կազմակերպվել է «Ի՞նչ: Որտե՞ղ: Ե՞րբ» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցել է ֆակուլտետի տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողների 8 թիմ:

Առաջին տեղը զբաղեցրել է «Տրիումֆ» թիմը, երկրորդը՝ «Հայրողիներ» թիմը, իսկ երրորդը՝ «Ֆեմիդա» թիմը: Խաղն անցավ ջերմ մթնոլորտում: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են ֆակուլտետի դեկանի կողմից:

Ալիսա ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՏՄՄ 3-րդ կուրս, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

Ի Մ Մ Ա Յ Ր Լ Ե Զ Ո Ւ

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ԱրՊԳ հայոց լեզվի ամբիոնի կողմից հայտարարված «Լավագույն ստեղծագործող» մրցույթում Լուսինե Օհանջանյանը զբաղեցրել է 2-րդ տեղը: Ներկայացնում ենք հատված նրա աշխատանքից:



Մայրենի լեզու... Այս բառահյուսքի մեջ ամփոփվում է մի ողջ պատմություն, մի ժողովուրդ, ում վիճակված էր դարերի գառնիթափներում մաքառել իր պետականության, սեփական լեզուն ու մտածողությունը, սեփական գիր ու գրականությունն ունենալու իրավունքը պաշտպանելու համար:

Հայ ժողովուրդն իր ճանապարհին փլվածքներ շատ է տեսել, սակայն մայրենի լեզուն վառ կերոնի պես հանել է նրան մշուշոտ աղջամուղջից ու հասցրել լուսապայծառ բարձունքներին:

Մայրենի լեզու... Այսքան թանկ գանձ աշխարհի ոչ մի թանգարանում չկա, այսքան քաղցր ու նվիրական բան երկրի երեսին չես կարող գտնել, որ ապրեցրել է մի ողջ ժողովրդի, իմաստավորել նրա գոյությունը, ուղենշել սլացքը:

Ուզում եմ բառե քանդակ հյուսել նրա

մասին, սակայն չգիտեմ, թե թանկարժեք ինչ մյուս ընտրեմ այն կերտելու համար: Կկերտեմ այն մի բարձր ու սեգ պատվանդանի վրա, որ լույս ճառագի սերունդների ուղիների՝ մութ բավիղներում չմոլորվելու համար, որ հար շողա ու զրնգա արփիագոծ երկնականարում, փայլատակի թրի պես, որ ոսոխը տեսնի ու սարսափի, որ հպարտանաք ու գորանաք նրանով:

Լուսինե Օհանջանյան, Հայոց լեզու և գրակ., 1-ին կուրս

Ք Ո Մ Ա Յ Ր Լ Ե Զ Ո Ւ Ն Զ Մ Ո Ռ Ա Ն Ա Ս

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ԱրՊԳ հայոց լեզվի ամբիոնի կողմից հայտարարված «Լավագույն ստեղծագործող» մրցույթում Աննա Մուսայելյանը զբաղեցրել է 3-րդ տեղը: Ներկայացնում ենք հատված նրա աշխատանքից:

Գեղեցիկ, սքանչելի, քաղցրահնչուն մի լեզու կա աշխարհում, որով խոսում է հինավուրց, անչար, ազատաբաղձ, շինարար մի ժողովուրդ: Այդ լեզուն հայերենն է: Հայերենն աստվածային լեզու է, այո, որովհետև այն գալիս է շատ հեռվից՝ ժամանակի ակունքներից: Գալիս է հայկյան նետի շառաչով, Արարատի հպարտ ու վեհ կեցվածքով, մեր գետերի, մեր ջրերի մաքրությամբ ու անաղարտությամբ, մեր պատմության բազմադարյա խոհերով, գալիս է մեր հայրերից, մեր ապուսպայերից:

Հինավուրց իմ լեզուն թաթախված է նաիրյան դաշտերի վաղորդյան ցողով, հայոց վանքերի իմաստուն խորհր-



դով, հայ շինականի արդար քրտինքով վաստակած թոնրահացի բուրմունքով: Մեր լեզուն կարծես տատիս գործած կարպետը լինի՝ նախշազարդ ու հազարագույն: Որքան դյուրիչ ես, որքան թախծալից, բայց նույնքան գորավոր ու խրոխտ, իմ մայր լեզու: Դու հայի երեկն ես, այսօրն ես, վաղն ես, նրա պահապան սուրբ ոգու ուժն ես: Դու կարծես հայ զինվորին ռազմի դաշտում պաշտպանող վահանը լինես, որի շնորհիվ դարեր շարունակ պահպանել ես մեզ ծուլման վտանգից: Իմ քաղցրահնչուն լեզու, դու՛ ես մեր մագաղաթյա սուրբ պատմության անխոս վկան, հայոց վանքերի վեմն ու խաչքարը: Հայն իր քարե երկրի ամրությունն է դրել քո մեջ, իր կարմիր գինու եռքը, իր խաչքարի գեղեցկությունը... Դու իմ արյունն ես, հայերեն խոսող, հայերեն երգող իմ սիրտն ու

միտքն ես: Մեր արահետը հեշտ չի ընթացել, մեր ուղին հանգիստ չի անցել, քանի որ շատերն են ցանկացել խլել մեզանից մեր անկողոպտելի գանձը՝ լեզուն, բայց հայը իր ամուր կամքի շնորհիվ պինդ է պահել վայրագ թշնամուց, կարողացել է իր սրտին սեղմած պահել-պահպանել այն:

Աննա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ, Թարգմ. գործ, 3-րդ կուրս